



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՅ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆ ԱՅՅԵԼԵՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

- ՀԱՅ ԿՐԹ. ՀԻՄՆԱԴՐԿՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐԵՆ ՅԱԿՈԲ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ԱՐԺԱՆԱՅԱԲ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱԾ «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»Ի ՇՔԱՆՇԱՆԻՆ
- ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԿՈՒԹԻՒՆԸ ՀՈՎԱՆԱԲՈՐԵՅ ՀԻՐԸՆԿԱԼՈՒՄԸ

Հինգշաբթի, 24 Յունիսը կրկնակիօրեն յիշատակելի օր մը եղաւ Ազգային Առաջնորդարանին համար, որովհետեւ կէսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ժողովականութիւնը, գործակցաբար Հայ Կրթական Հիմնարկութեան հետ, «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ հիւրընկալեցին Արցախի նախկին նախագահ եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի փոխ նախագահ Արկադի Ղուկասեանը. պաշտօնական ու ներկայացուցչական դէմքերու մասնակցութեամբ տեղի ունեցած հիւրընկալումի պահուն, Առաջնորդ Սրբազանը, յանուն Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանով պատուեց Հայ Կրթական Հիմնարկութեան նուիրեալներէն՝ բարերար Տիար Յակոբ Պաղտասարեանը:

Տիար Արկադի Ղուկասեան, Հիմնադրամի Լոս Անճելըսի բաժանմունքի տնօրէն Արա Ակիշեանի եւ պատասխանատուներէն Սարգիս Գոթանճեանի ընկերակցութեամբ Ազգ. Առաջնորդարան ժամանեց կէսօրին: Առաջնորդ Սրբազանին կողքին, յարգելի հիւրը դիմաւորեցին Թեմիս Կրօնական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան անդամներ:

Ներկայ էին Հայաստանի Ազգային Ժողովի անդամ Տիար Րաֆֆի Յովհաննէսեան, Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան, Մեծի Տանն Կիլիկիոյ երեց անդամներէն Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Տիար Վիգէն Յովսէփեան, Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչներ Տեարք Մարտիկ Կապուտեան եւ Յարութ Մանուկեան, Հայ Դատի Յանձնախումբի, Հայ Կրթական Հիմնարկութեան վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.ի, ՀՕՄի եւ Համազգայինի Կեդրոնական ու Շրջանային վարչութեանց անդամներ, Դաւթեան-Մարիամեան կրթական Հաստատութեան, Իրանահայ, «Ջան Թաւրիզ» եւ «Նոր Ջուղայի

Բարեկամներ» միութիւններու ներկայացուցիչներ, CASPSի եւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնաց Ծժանդակ Մարմինի անդամներ, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանի եւ Զ. Կ. Զիմարկութեան բարերարներ ու բարեկամներ:

## **ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԵՐ**

Տերունական Աղօթքէն ու սեղաններու օրհնութենէն ետք, նոյն յարկին տակ բոլորուած յարգարժան հիւրերուն ու ներկայ ներկայացուցչական դէմքերուն ողջոյնի խօսք արտասանեց Առաջնորդ Սրբազանը, վեր առնելով այս հանդիպումին կրկնակի կարեւորութիւնը: Ան առաջին հերթին ողջունեց Տիար Արկադի Ղուկասեանի ներկայութիւնը, յիշատակելով, որ ան Լոս Անճելըս իր այցելութեանց առիթներով միշտ ալ գտնուած է այս յարկին տակ, ուր դիմաւորուած է իբրեւ հարազատի: Ան վերահաստատեց Ազգ. Առաջնորդարանիս ու անոր շուրջ բոլորուած կազմակերպութեանց ու միաւորներուն անվերապահ զօրակցութիւնն ու նուիրաբերումը՝ «Յայաստան» հիմնադրամին ու անոր ծրագիրներուն: Ապա, անդրադառնալով Ազգայնական կողմէ վերջին օրերուն Արցախի սահմաններուն վրայ կատարուած յարձակումներուն ու վտանգաւոր ոտնձգութիւններուն, Առաջնորդ Սրբազանը համոզում յայտնեց, որ Արցախի հողերն ու իրաւութիւնները պիտի պաշտպանուին այն ոգիով ու զօրակցական կեցուածքով, որ արտայայտութիւն գտաւ Արցախեան Շարժումի սկզբնաւորման օրերէն մինչեւ օրս, որովհետեւ Արցախը ողջ հայութեան դատն է, անկկա հայութիւնը միացնող դատ է:

Առաջնորդ Սրբազանը յայտարարեց, որ այս հանդիպումը յիշատակելի պիտի ըլլայ նաեւ այն պատճառով, որ յանուն Վեհափառ Զայրապետին, «Կիլիկեան Ասպետ»ի շքանշան պիտի շնորհէ Ազգ. Բարերար եւ Զայ Կրթական Զիմարկութեան նուիրեալ ծառայողներէն Տիար Յակոբ Պաղտասարեանի: Ան նշեց, որ Տիար Յ. Պաղտասարեանի պարգեւատրումը նախատեսուած էր առանձին ձեռնարկով մը, սակայն նկատի ունենալով Արցախին ու Տիար Ա. Ղուկասեանին նուիրեալ հայորդիին սրտամօտութիւնը, յարմար նկատուած է, որ պարգեւատրումը տեղի ունենայ այսօր: Առաջնորդ Սրբազանը նաեւ յատուկ կարեւորութեամբ անդրադարձաւ այն իրողութեան, որ այս ընդունելութիւնը կը հիւրընկալուի Զայ Կրթական Զիմարկութեան կողմէ, իսկ մեծարեալը անոր մէկ նուիրեալ անդամն է:

Ճաշի պահէն ետք, յայտագիրը վարեց Ազգ. Առաջնորդարանի անձնակազմի անդամներէ Տիկն Զնար Գորթոշեան: Ան ողջունեց ներկայ անձնաւորութիւններն ու ներկայացուցչական դէմքերը, անդրադարձաւ հանդիպումի առիթներուն եւ իրենց ողջոյնի ու սրտի խօսքերը արտասանելու հրաւիրեց յաջորդաբար ներկայացուցչական դէմքեր եւ յարգելի հիւրը:

Ողջոյնի առաջին խօսքը արտասանեց Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկն Ռիմա Պօղոսեան: Ան ըսաւ որ բոլորիս համար պատիւ է ու բերկրանքի առիթ, երբ Արցախի հերոս ժողովուրդի մէկ ներկայացուցիչը կ'ունենանք մեզի հետ, իսկ Արցախի նախկին

Նախագահին ներկայությունը նոր առիթ է ակելի եւս ամրապնդելու Արցախի հետ մեր կապերը: Տիկին Ռ. Պողոսեան գոհունակութեամբ արձագանգեց Արցախի վերջին ընտրութիւններուն, Շուշիի վերաշինութեան ու նմանօրինակ հպարտառիթ իրագործումներու, սակայն նաեւ մտահոգութիւն արձանագրեց ազերիական նորագոյն ոտնձգութիւններուն համար, որոնք պատճառեցին հայ զոհեր: Ան շեշտեց, որ մեր ճիգերը կ'ուղղուին դեպի խաղաղութեան ամրապնդում, իսկ թուրքն ու ազերին պետք է լաւ գիտնան, որ հայութիւնը տեր է իր արդար իրաւունքներուն, թէ՛ սփիւռքն ու ողջ հայութիւնը կը կանգնին Արցախի կողքին: Ան համոզում յայտնեց, որ Արցախն ու հայութիւնը արդար պայքարը պիտի շարունակեն, մինչեւ որ աշխարհը համոզուի մեր իրաւունքներու արդարացիութեան:

Ողջոյնի խօսք արտասանեց նաեւ Հայ Կրթական Միութեան վարչութեան ատենապետ Տիար Վահէ Պետրոսեան: Ողջունելէ ետք Տիար Արկաղի Ղուկասեանի ներկայութիւնը, ան շնորհակալութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին, որ Հ. Կ. Հիմնարկութեան առիթը ընծայած էր մասնակից ըլլալու հիւրընկալման: Ան ներկաներուն ուշադրութեան յանձնեց, որ Հիմնարկութիւնը կը պատրաստուի Նոյեմբերին տօնել իր հիմնադրութեան 60րդ տարեդարձը, ու հակիրճ կերպով անդրադարձաւ այն ազգօգուտ գործին, որ Հիմնարկութեանն է եղած տասնամեակներ շարունակ, եւ որ վերջին երկու տասնամեակներուն տարածուած է նաեւ Հայաստանի ու Արցախի վրայ: Տիար Վ. Պետրոսեան ապա յատուկ կարեւորութեամբ անդրադարձաւ Տիար Յակոբ Պաղտասարեանի նուիրաբերումներուն, ընդգելով, որ ան ոչ միայն անձնապէս կը հովանաւորէ Արցախի բարգաւաճման ու դպրոցներու բարելաման ծրագիրներ, այլ նաեւ կ'աշխատի հովանաւորներ ապահովել ազգաշէն ծրագիրներու:

Հայաստանի գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեան իր սրտի խօսքը սկսաւ գոհունակութիւն արտայայտելով, որ մասնակից է այս ձեռնարկին: Ան շնորհակալութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին եւ Հայ Կրթական Հիմնարկութեան, իսկ ներկայացուցչական այս համախմբումը նկատեց «Հայաստան» Հիմնադրամին ու Արցախի հանդէպ զօրակցութեան պերճախօս արտայայտութիւն: Գլխաւոր հիւպատոսը դրուատիքով անդրադարձաւ Տիար Արկաղի Ղուկասեանի գործունեութեան, յատկապէս «Հայաստան» հիմնադրամի փոխ նախագահութիւնը ստանձնելէն ետք, նշելով, որ ան նոր որակ ու տարածք բերած է հիմնադրամի գործունեութեան: Տիար Գ. Յովհաննիսեան նաեւ շնորհաւորանքի խօսք ուղղեց Տիկին Ռիմա Պողոսեանի՝ Ազգային Վարչութեան ատենապետի պաշտօնը ստանձնած ըլլալուն համար:

Յարգելի հիւրը բեմ հրաւիրելէ առաջ, հանդիսավարը՝ Տիկին Զ. Գորթոշեան յայտնեց, թէ անակնկալ մը վերապահուած է Տիար Ա. Ղուկասեանի. նկատի ունենալով, որ այս օրերուն ան կը տօնէ իր ծննդեան տարեդարձը, անոր հրամցուեցաւ գեղեցիկ կարկանդակ մը, մինչ ներկաները երգելով բարի տարեդարձ մաղթեցին անոր:

Տիար Ա. Ղուկասեան շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան համար ու ընդգծեց, որ գոհ է դարձեալ այս յարկին տակ գտնուելուն համար, զայն կը նկատէ հարազատ տուն մը: Ան անդրադարձաւ այն իրողութեան, որ ներկաներուն ու առհասարակ հայութեան համար,

Արցախի իրադարձությունները ուշագրաւ են ու երբեմն՝ մտահոգիչ, սակայն ինքնավստահօրէն հաստատեց, թէ Արցախին ոչ մէկ վտանգ կը սպառնայ, որովհետեւ Արցախի ժողովուրդը պատրաստ է պաշտպանելու իր հողն ու արդար իրաւունքները: Ան նկատել տուաւ, որ վերջին շրջանին, յաճախ կը խօսուի Ազրայէճանի գինական կարողութիւններուն յաւելման մասին, սակայն պետք չէ մոռնալ, թէ պատերազմը միայն զենքով չի մղուիր, այլ կայ ոգիի ու իրաւունքի հարց, ու «մենք գիտենք թէ մեր հայրենիքը կը պաշտպանենք», ըսաւ ան: Տիար Ա. Ղուկասեան նաեւ հաճելի մանրապատումներով անդրադարձաւ ազերիական կողմին հետ բանակցութեանց ընթացքին անոր անհիմն տրամադրութիւնները ջրելու արցախեան կեցուածքին, ապա, շնորհակալութեան խօսք ուղղեց հայութեան՝ Արցախին ու «Հայաստան» հիմնադրամին տրամադրուած զօրակցութեան համար: Ան նշեց, թէ յատուկ աշխատանք կը տարուի, որպէսզի Հայաստան, Արցախ ու արտերկիր գիրար լսեն ու փոխադարձաբար հասկնան, որովհետեւ մեր դիմագրուած հարցերը առանձինն չենք կրնար լուծել: Ան շեշտեց, որ Արցախի ու Յեղասպանութեան հիմնահարցերը համայն հայութեան հարցերն են, անոնց շուրջ բաժանում չկայ, իսկ հայութիւնը միացեալ ճիգերով պիտի յաջողի յաղթահարել բոլոր դժուարութիւնները:

Իր խօսքի վերջին բաժինով, Արցախի նախկին նախագահը դրուատիքով խօսեցաւ Տիար Յակոբ Պաղտասարեանի նուիրաբերումներուն մասին, եւ իբրեւ մէկ ականատեսը անոր բարերարութիւններուն, վկայութիւններ տուաւ անոր ապրած ուրախութեան ու տխրութեան պահերուն մասին, ի տես ծրագիրի մը յաջողութեան կամ արձանագրուած դժուարութեանց:

Ա. Ղուկասեան իր խօսքը եզրափակեց վերհաստատելով այն հաւատքը, որ Հայաստանն ու Արցախը պիտի վերամիանան, որովհետեւ «մեր երազը երկու անջատ հանրապետութիւններ ունենալ չէ», այլ՝ մեր մեծ հայրենիքի երազը իրականացնելն է՝ ո՛չ միայն այժմու Հայաստանով ու Արցախով:

## **ՊԱՐԳԵԼԱՏՐՈՄ**

Խօսքերու փոխանակումէն ետք, Առաջնորդ Սրբազանը բեմ հրաւիրեց Տիար Յակոբ Պաղտասարեանը, զայն պարգեւատրելու համար:

Առաջնորդ Սրբազանը յայտնեց, թէ ընդառաջելով Թեմիս Ազգ. Իշխանութեանց, Հայ Կրթ. Հիմնարկութեան ու այլ միաւորներու փափաքին, խնդրամատոյց եղած էր Վեհափառ Հայրապետին, որպէսզի ըստ արժանւոյն գնահատէ Տիար Յակոբ Պաղտասարեանի նուիրաբերումներն ու ծառայութիւնները: Ան գոհունակութիւն յայտնեց, որ այսօր, Տիար Արկադի Ղուկասեանի այցելութեան առիթով, ու ի ներկայութեան հայրենի պետութեան ներկայացուցիչին, կուսակցական ու միութեանց ներկայացուցիչներու, Հայ Կրթական Հիմնարկութեան հետ համախորհուրդ այս ընդունելութիւնը կազմակերպելով՝ առիթը կը ներկայանայ Վեհափառին շնորհած պարգեւը ընծայելու ազնիւ բարերարին:

Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ Տիար Յակոբ Պաղտասարեանի բարերարութիւններուն, որոնք ընծայուած են մեր Թեմի ազգային միաւորներուն, Արցախին, Ջաւախքին ու Հայաստանին: Ապա, ան ընթերցեց Վեհափառ Հայրապետին կոնդակը, ուր կ'ըսուէր, թէ սուիրեալ բարերարը կ'արժանանայ Կաթողիկոսութեան «Ասպետ»ի շքանշանին: Առաջնորդ Սրբազանը բարերարին կուրծքը զարդարեց յատուկ շքանշանով, մինչ ներկայ հոգեւոր հայրերը կ'երգէին «Ուրախ լեր» շարականը: Առաջնորդ Սրբազանը շնորհաւորանքի խօսք ուղղեց նաեւ բարերարին տիկնոջ ու ընտանեկան հարազատներուն, որոնք ներկայ էին այս յիշատակելի հանդիսութեան:

Տիար Յակոբ Պաղտասարեան երախտագիտութեան ու գոհունակութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին եւ Առաջնորդ Սրբազանին:

Պաշտօնական յայտագիրը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով: Ներկաները խմբերգեցին «Կիլիկիա»ն եւ Հայաստանի Զայլերգը: Մեկնելէ առաջ, ներկաները շնորհաւորեցին մեծարեալը եւ ունեցան մտերմիկ գրոյցի պահ մը:

## **"HAYASTAN" ALL ARMENIAN FUND VICE-CHAIR ARKADY GHOUKASIAN VISITS THE PRELACY**

- MR. HACOP BAGHDASARIAN AWARDED THE "KNIGHT OF CILICIA" MEDAL
- ARMENIAN EDUCATIONAL FOUNDATION HOSTS THE RECEPTION

Thursday, June 24, 2010, was a memorable day at the Prelacy as H.E. Archbishop Moushegh Mardirossian and Councils, in collaboration with the Armenian Educational Foundation, hosted former President of the Nakorno-Karabakh Republic and Vice-Chair of the "Hayastan" All Armenian Fund H.E. Arkady Ghoukasian at the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

In addition, during the reception, on behalf of H.H. Catholicos Aram I, the Prelate awarded long-time supporter of the AEF Mr. Hacop Baghdasarian with the "Knight of Cilicia" medal.

Upon his arrival at the Prelacy, Mr. Ghoukasian, who was accompanied by Armenia Fund Chair Mr. Ara Aghisian and Executive Director Mr. Sarkis Kotanjian, was welcomed by the Prelate and Religious and Executive Council members.

In attendance were Armenian National Assembly member the Honorable Raffi Hovannisian, Consul General of Armenia the Honorable Grigor Hovhannisyan, Cilician Brotherhood member H.E. Archbishop Yeprem Tabakian, ARF Bureau member Dr. Viken Hovsepian, ARF Central Committee representatives Mr. Mardig Gaboudian and Mr. Harout Manoukian, representatives of ANC, AEF, Homenetmen, ARS, Hamazkayin, Davitian and Mariamian Educational Foundation, Armenian Society of Los Angeels, Jan Tavriz, Friends of New Julfa, CASPS, Prelacy Ladies Auxiliary, and friends.

Following the invocation, the Prelate welcomed Mr. Ghoukasian and reaffirmed the support of the Prelacy and affiliated bodies to the "Hayastan" All Armenian Fund and its endeavors. He then announced that later in the program he would be awarding Mr. Hacop Baghdasarian with the "Knight of Cilicia" medal on behalf of His Holiness, in recognition of his decades-long support and contributions to the AEF and other Armenian organizations.

The official program began after lunch with Master of Ceremonies and Prelacy staff member Mrs. Knar Kortoshian delivering the welcoming remarks and acknowledging the guests in attendance. Remarks were subsequently delivered by Executive Council chair Mrs. Rima Boghossian, AEF Chair Mr. Vahe Bedrossian, and Consul General Grigor Hovhannisyan.

Prior to inviting Mr. Ghoukasian to convey his message, Mrs. Kortoshian announced there was a surprise for the guest of honor. Given that it was around the time of his birthday, a cake was brought out and guests offered their congratulations on this occasion.

Mr. Ghoukasian thanked the Prelate and guests for the warm reception. With regards to the current situation and what the future holds for Artsakh, Mr. Ghoukasian alleviated the legitimate concerns of the guests by affirming that Artsakh will not be in danger because the citizens are ready to defend their land and rights. In conclusion, Mr. Ghoukasian stated his belief that Armenia and Artsakh will one day unite, for what we want is not two separate republics, but one, united Armenia.

The Prelate then invited Mr. Hacop Baghdasarian and his wife Hilda to the podium to award him with the "Knight of Cilicia" medal. Mr. Baghdasarian expressed his gratitude to His Holiness and the Prelate for the honoe.

The reception came to a close with the benediction and the singing of the Cilician and Armenian anthems.